Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1575 - Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## «ԳԱՌՆԻ-ԳԵՂԱՐԴ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը | Կատարողը (պատասխանատու) | Ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Երևան - Գառնի -Գեղարդ ավտոճանապարհի սողանքային հատվածների ամենամյա վերանորոգում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | յուրաքանչյուր տարի` մինչև մայիսի 30-ը | ՀՀ պետական բյուջե |
| 2. | Երևան - Գառնի -Գեղարդ ավտոճանապարհի աղբահանություն | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան | պարբերաբար | ՀՀ պետական բյուջե |
| 3. | Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Երևան-Զրվեժ ավտոճանապարհին հարակից` մանր եղջերավոր անասունների վաճառակետերի տեղափոխում այլ` սահմանված պահանջներին համապատասխանող վայրեր | Երևանի քաղաքապետարան<br><br>ՀՀ Կոտայքի մարզպետարան | 2008 թ. դեկտեմբերի 31 | |
| 4. | Համայնքներում կանոնավոր աղբահանության կազմակերպման նպատակով`<br>1) մեկ մաքրման և աղբահեռացման կազմտեխնի-կայի ձեռքբերում և նվիրատվություն Գողթի գյուղա-կան համայնքին` Գողթի գյուղական համայնքի և «Գառնի-Գեղարդ» զբոսաշրջային երթուղում ընդգրկված մյուս համայնքների միջև կանոնավոր աղբահանության ապահովման մասին պայմանագրի առկայության դեպքում. | ՀՀ Կոտայքի մարզպետարան | 2009 թ. ապրիլի 1 | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 2) 200 մեծ և 150 փոքր աղբամանների ձեռքբերում և նվիրատվություն Գառնի-Գեղարդ զբոսաշրջային երթուղում ընդգրկված համայնքներին | | | |
| 5. | Երևան-Գառնի-Գեղարդ երթուղու ավտոճանապարհի վրա գտնվող ավանդական ուտեստների, հուշանվերների և արհեստագործական արտադրանքի վաճառակետերի համար միասնական նախագծերի ու նախահաշվի մշակում և տրամադրում համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին` նախագիծը համաձայնեցնելով ՀՀ վարչապետի 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 970-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի հետ (այսուհետ` աշխատանքային խումբ) | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ.<br>փետրվարի 1 | |
| 6. | Ողջաբերդ գյուղում գտնվող կիսաքանդ շինության ապամոնտաժում | ՀՀ Կոտայքի մարզպետարան<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. մարտի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 7. | «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավար-ման պլանի մշակում (հստակեցնելով զբոսաշրջիկ-ների համար նախատեսված երթուղիներն ու կածան-ները) և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. ապրիլի 1 | |
| 8. | «Զրվէժ» անտառ-պարկի տարածքում գտնվող գերեզմանատան` փողոցից անջատող պատի կառուցում, տարածքի բարեկարգում և աղբահեռացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. ապրիլի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 9. | Երևան-Գառնի-Գեղարդ զբոսաշրջային երթուղով անցնող գազամատակարարման խողովակների ներկում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. ապրիլի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 10. | Երևան-Գառնի-Գեղարդ ավտոճանապարհի անբարեկարգ հատվածների նորոգում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան | 2009 թ. ապրիլի 1 | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 11. | Գառնիի գյուղական համայնքում, մայրուղու և դեպի Գառնիի տաճար տանող ճանապարհի խաչմերումի կահավորում` լուսացույցներով, և նվիրատվություն Գառնիի գյուղական համայնքին | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2009 թ. ապրիլի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 12. | Չարենցի կամարի շրջակա տարածքի կազմակերպում` նախագիծը համաձայնեցնելով աշխատանքային խմբի հետ | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. մայիսի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 13. | Գառնիի ամրոցի մուտքի հարթակի կազմակերպում` նախագիծը համաձայնեցնելով աշխատանքային խմբի հետ | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. մայիսի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 14. | Գեղարդի վանական համալիրի մուտքի հրապարակի կազմակերպման, գետին հարող տարածքի փլուզման վերականգնման, ավտոկայանատեղիի և մայթի կառուցման նախագծի ու նախահաշվի մշակում և տրամադրում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն` նախագիծը համաձայնեցնելով աշխատանքային խմբի հետ | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. փետրվարի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 15. | Գեղարդի վանական համալիրի մուտքի հրապարակի կազմակերպում, գետին հարող տարածքի փլուզման վերականգնում, ավտոկայանատեղիի և մայթի կառուցում` ՀՀ մշակույթի նախարարության կողմից ներկայացված նախագծին համապատասխան | Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի (համաձայնությամբ)<br><br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2009 թ. մայիսի 1 | Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի (համաձայնությամբ)<br><br>ՀՀ պետական բյուջե |
| 16. | Գեղարդը խորհրդանշող առյուծի քանդակի պատվանդանի ամրացում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. մայիսի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 17. | Խորհրդային Միության կազմավորման 60-ամյակին նվիրված հուշարձանի վերականգնում, շրջակա տարածքի բարեկարգում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. մայիսի 1 | ՀՀ պետական բյուջե |
| 18. | Երևան-Գառնի-Գեղարդ զբոսաշրջային երթուղում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծում և գործարկում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն` «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալութուն» ՓԲԸ-ի միջոցով | 2009 թ.<br>1-ին կիսամյակ | ՀՀ պետական բյուջե |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ